



Եվրոպայում անվտանգության և  
համագործակցության կազմակերպություն  
Երևանյան գրասենյակ

## **ՄԱՀԿ-ն նախաձեռնում է ֆոտոցուցահանդես խոսքի և տեղեկատվության ազատության թեմայի շուրջ**

ԵՐԵՎԱՆ, 3 մայիսի 2010թ. - Մամուլի ազատության օրվա կապակցությամբ այսօր Երևանում բացվեց «Մամուլի ազատություն. տեղեկատվության ազատության իրավունք» թեմայով ցուցահանդեսը:

Մեկ շաբաթ տևողությամբ ցուցահանդեսը կազմակերպվել է «Տեղեկատվության ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ և ՄԱՀԿ Երևանյան գրասենյակի ու ՄԱԿ-ի Հանրային վարչության Երևանյան գրասենյակի հետ համագործակցությամբ: Այն ներառում է միջոցառման համար ներկայացված երեք հարյուր աշխատանքներից ընտրված երեսուն ինքնատիպ լուսանկար. ակնկալվում է հրապարակել ցուցահանդեսի բոլոր լուսանկարները կատալոգում:

ՄԱՀԿ Երևանյան գրասենյակի ղեկավար դեսպան Մերգեյ Կապինոսը ողջունեց ցուցահանդեսը որպես ինքնատիպ միջոց՝ ներկայացնելու տեղեկատվության և խոսքի ազատության մասին հանրային ընկալումները:

«Տեղեկատվության մատչելիությունը առանցքային դեր ունի մարդկային արժանապատվության հարգանքի հարցում և ծառայում է որպես կարևոր գործիք՝ հնարավորություն ընձեռելու քաղաքացիներին ակտիվ մասնակցություն ունենալ հանրային կյանքում և օգնում է իրականացնել իրենց այդ իրավունքները: Այս ցուցահանդեսը լավ հնարավորություն է՝ լուսաբանելու և քննարկում խթանելու այս խնդիրները շուրջ»:

Միջոցառման բացմանը ներկա էին լրագրողներ, պետական կառույցների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

«Տեղեկատվության ազատության կենտրոն» ՀԿ նախագահ Շուշան Գոյդոյանը հավելեց. «Մա առանձնահատուկ ցուցահանդես է, քանզի յուրաքանչյուրը՝ մասնավորապես լրագրողները և պրոֆեսիոնալ լուսանկարիչները, հրավիրված էին ներկայացնելու իրենց լուսանկարները թեմայի վերաբերյալ: Այս հիմնարար իրավունքները անքակտելիորեն կապված են մամուլի ազատության հետ, որն իր հերթին նպաստում է ժողովրդավարացման խթանմանը, հմուտ կառավարմանն ու մարդկային զարգացմանը»:

Լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք դիմել ՄԱՀԿ Երևանյան գրասենյակի մամուլի և հանրային տեղեկատվության հարցերով ավագ օգնական Գայանե Տեր-Ստեփանյանին հետևյալ հեռախոսահամարներով՝ (+374 10) 22 96 10/ 11/12/13/14 . նրբ. 5407, քջջային՝ (091) 012603: